Ալեքսանդր Ծատուրյան

Տխուր երգ

Հայրենիքիս սարե՛ր, ձորեր.
Խաղո՛ւն առվակ, ճո՛խ հովիտ
Անկյանք ձըմեռ, դաժան օրեր
Տարան ձեր փայլն ու ժըպիտ...

Հայի հույսե՛ր, հայի՛ իղձեր,
Այնքա՛ն շողուն, լուսավառ
Ձեզ կաշկանդեց կյանքի ձըմեռ.
Ձեզ պաշարեց սև խավար...

Եվ դու, եղբա՛յր իմ հուսախաբ,
Ուղիղ անծա՛յր ու անծիր.
Դեռ չըհասած ցանկալի ափ
Դու կես-ճամփին մընացիր...

Ու լալիս ես՝ դու վիզ ճըկած,
Ավեր երկրիդ լուռ վըկա.
Բայց, էհ, զո՛ւր են քո սուգ ու լաց
Սուգ ու լացում - կյա՛նք չըկա...

Եղբա՛յր, լացով կյանքի թըփից
Ո՞վ է քաղել գարնան վարդ...
Հեռո՛ւ քեզնից թուխպ ու թախիծ,

Հեռո՛ւ քեզնից ցավ ու դարդ...

Որպես պողպատ՝ կըրակն ընկած,
Դու ամրացի՛ր, կարծրացի՛ր.
Նո՛ր ույժերով, նորից վառված,
Ապրի՛ր, կըռվի՛ր ու գործի՛ր...

Անդուլ կըռվում, անդուլ գործում
Քեզ չի՛ հաղթիլ ժանտ ձըմեռ.
Գործի՛ր, եղբա՛յր, կըռվի ծոցում
Ու փայփայի՛ր գարնան սեր...